

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 9/2

10 մարտի 2015 թ.

Քննարկվեց Ա/Ձ Հերմինե Ավետիսյանի 17.02.2015 թ-ի բողոքը ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 02.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 277361 որոշման դեմ:

Ա/Ձ Հերմինե Ավետիսյանի բողոքում բերված փաստարկները.

07.02.2015 թ-ին Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը ստացել է Արաբկիրի ՀՏ պետի 02.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 277361 որոշումը (այսուհետ Որոշում): Համաձայն Որոշման Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը պետք է պատասխանատվության ենթարկվի ՎԻՎՕ-ի 169.1-2 հոդվածի խախտման համար՝ տուգանքի չափը սահմանելով հոդվածով նախատեսված առավելագույն 20.000 դրամ, 2014 թ-ի սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը ուշ ներկայացնելու համար:

Որոշումն իրավաչափ չէ հետևյալ պատճառաբանությամբ:

19.10.2014 թ-ին սահմանված կարգով էլեկտրոնային կարգով ուղարկվել է եկամտային հարկի սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը: Էլեկտրոնային կարգով հաշվետվություններ ներկայացնելիս համակարգը ծրագրավորված է այնպես, որ սխալի հնարավորությունը գրեթե բացառվում է: Այսպես, հաշվետվության ժամանակաշրջանն ընտրելիս ապագա ամիս ընտրելու դեպքում համակարգը արգելում է հաշվետվության լրացումը և հայտնվում է հաղորդագրություն <Ընտրված է ապառնի ժամանակաշրջան>:

Վստահելով էլեկտրոնային համակարգին, որն ընդհանուր հաշվով արգելում է ապառնի ժամանակաշրջանի համար հաշվետվության ներկայացումը Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը ուղարկել է սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը սխալմամբ սեպտեմբեր ամսվա փոխարեն նշելով ապառնի ժամանակաշրջան՝ հոկտեմբեր ամիսը:

25.10.2014 թ-ին Արաբկիրի հարկային տեսչությունից ստացվել է 21.10.2014 թ-ի թիվ 27199 արձանագրությունը առ այն, որ սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը չի ներկայացվել: 27.10.2014 թ-ին անմիջապես ներկայացվել է շտկված հաշվետվությունը:

Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը նշում է, որ Որոշումը կայացնելիս վարչական մարմինը պետք է հաշվի առներ այն հանգամանքը, որ թյուրիմացությունը տեղի է ունեցել այն պատճառով, որ հաշվետվությունների լրացման էլեկտրոնային համակարգը օգտագործողին տալիս է այն վստահությունը, որ ապառնի ժամանակով հաշվետվության լրացումը բացառվում է թյուրիմացության մեջ գցելով հաշվետվությունը լրացնողին:

Որոշում կայացնելիս վարչական մարմինը պետք է հաշվի առներ այն հանգամանքը, որ երբ հայտնաբերվել է խախտումն անմիջապես կատարվել է դրա շտկումը և թույլ է տրվել ընդամենը հինգ օրվա ուշացում: Բացի այդ, խախտում կատարվել է առաջին անգամ և տուգանքի առավելագույն չափի սահմանումը նպատակ ունի անհարկի գումար գանձել, այլ ոչ թե իրավաչափ պատժի կիրառում:

Ելնելով վերոգրյալից և հաշվի առնելով, որ կատարված խախտումը էլեկտրոնային համակարգի ոչ կատարյալ աշխատանքի արդյունք է, Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը խնդրում է վերացնել Որոշումը:

«Հ ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը»

«Հ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը 19.10.2014 թ-ին էլեկտրոնային եղանակով ուղարկել է եկամտային հարկի սեպտեմբեր ամսվա հաշվետվությունը, սակայն սխալմամբ սեպտեմբեր ամսվա փոխարեն նշել է ապառնի ժամանակաշրջան՝ հոկտեմբեր ամիսը:

«Հ ՖՆ Արաբկիրի ՀՏ կողմից Ա/Ձ Հերմինե Ավետիսյանին է ուղարկվել 21.10.2014 թ-ի թիվ 27199 արձանագրությունը, որով վերջինիս հայտնվել է սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվարկը սահմանված ժամկետում չներկայացվելու մասին: Արձանագրությունը ստանալուց հետո Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը 27.10.2014 թ-ին սահմանված կարգով ներկայացրել է 2014 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը: Արդյունքում, հաշվի առնելով Ա/Ձ Հերմինե Ավետիսյանի կողմից 2014 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը սահմանված ժամկետում չներկայացնելու հանգամանքը, «Հ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի կողմից 02.02.2015 թ-ին ընդունվել է վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 277361 որոշումը, որով Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Հ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասի հատկանիշներով ենթարկվել է վարչական պատասխանատվության՝ գումարով 20.000 դրամ:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ քննարկվող դեպքում Ա/Ձ Հերմինե Ավետիսյանի կողմից 2014 թ-ի սեպտեմբեր ամսվա եկամտային հարկի հաշվետվությունը ներկայացվել է սահմանված ժամկետի խախտմամբ: Այսինքն, նրա կողմից թույլ է տրվել խախտում, որի համար «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» «Հ օրենսգրքի 169.1-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված է պատասխանատվություն: Նշված հանգամանքը հիմք է հանդիսացել «Հ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 02.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 277361 որոշումը կայացվելու համար: Ընդ որում հարկ է նշել, որ Ա/Ձ Հերմինե Ավետիսյանը պատշաճ ծանուցվել է վարչական վարույթին մասնակցելու համար, սակայն վերջինս չի ներկայացել:

Բողոքում բերված այն պնդումները, որ կատարված խախտումը էլեկտրոնային համակարգի ոչ կատարյալ աշխատանքի արդյունք է, հիմնավոր չեն, քանի որ Ա/Ձ Հերմինե Ավետիսյանի կողմից վերոգրյալ զանցանքը թույլ չի տրվել էլեկտրոնային համակարգի ոչ կատարյալ աշխատանքի արդյունքում:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արաբկիրի ՀՏ պետի 02.02.2015 թ-ի վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 277361 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ